«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԲՈՒԺԿԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատված է «Երևանի Շառլ Ազնավուրի անվան
մշակույթի և արվեստի պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի 2024թ. հուլիսի 4-ի թիվ N6/2024 որոշմամբ

ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԲՈՒԺԿԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) բուժկետը հանդիսանում է Քոլեջի ստորաբաժանում, որն ապահովում է ուսանողների և աշխատակիցների առաջին բժշկական օգնությունը, այդ թվում՝ վնասվածքների դեպքում, իրականացնում է ուսումնական լսարանների, կաբինետների, մարզադահլիճի սանիտարական հսկողությունը:
2.Բուժկետն իր գործունեությամբ ենթարկվում է Քոլեջի տնօրենին:

2. Բուժկետի խնդիրները, գործառույթները

3. Բուժկետի գործառույթներն են՝
   1) կատարում է հիվանդի և/կամ/ վատառողջ ուսանողների ընդունելություն, ըստ անհրաժեշտության կազմակերպում և ապահովում է բուժսպասարկումը՝ ինչպես ընթացիկ, այնպես ել ընդունելություն քննությունների ժամանակ,
   2) իրագործում է սանիտարահիգենիկ հսկողություն Քոլեջին պատկանող լսարաններում,
   3) սերտորեն աշխատում է Քոլեջի տնօրենի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների հետ,
   4) վերահսկողություն է իրականացնում Քոլեջի դասախոսական անձնակազմի սանիտարական գրքույքների նկատմամբ,
   5) առողջության և ավտանգության համար պատասխանատու աշխատողները պարտավոր են պահպանել Քոլեջի ներքին կարգապահական կանոնները, գործել իրենց իրավունքների և պարատականությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքնային օրենսդրությամբ, Քոլեջի կանոնադրությամբ, պաշտոնի հրահանգով և սույն կանոնակարգով,
   6) բուժկետն ունի գույք, որի պահպանման համար բուժկետի աշխատակիցը կրում է պատասխանատվություն:

3.Եզրափակիչ դրույթներ

4.Սույն կանոնակարգն ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են Քոլեջի կառավարման խորհրդի որոշմամբ: